Պետերբուրգի կայսերական թանգարանին մէջ, և ինչպէս կարծուի, կը ներկայացնէ Պողոսէոս Ա. ի և իւր Եւրիդիկեայ կնոջ զբաղմունքները։

(Շարայարելի).

ՏԱՂ Ի Ս. ԱՆՏՈՆ

Անտոն ոստ անապատի
Հովտաց լերանց աղբիւր ականց [1]։ Այոյ այոյ, Հովտաց.. և այլն։
Զարդ, զարդ անապատի,
Քաղցրաբարբառ սաղմոսերգող։ Այոյ այոյ, Քաղցրա.. և այլն։
Շուշան, շուշան վայրենի,
Հոտս ըզտաշխից առեալ և զգոյն։ Այոյ այոյ, Հոտս ըզտաշխից.. և այլն։
Ցանկ, ցանկ հոգեղինաց [2]
Սանդուխք հոգւոց մարմնաւորաց։ Այոյ այոյ, Սանդուխք.. և այլն։
Սուգ, սուգ առեալ ծառոց
Տերևաթափ լինել [3] *յոստոց։* Այոյ այոյ, Տերևաթափ.. և այլն։
Գազանք, գազանք վայրենի,
Աստէն [4] *եկեալ ողբով ի սուգ։* Այոյ այոյ, Աստէն.. և այլն։
Մէք եմք, մեք եմք կորուսեալ,
Զմեր առաջնորդն և զվարդապետն։ Այոյ այոյ, Զմեր.. և այլն։
Փ. — Մնձամբ խոնարհիմ ի ճրգնութիւնքս քո,
Ո՛վ սուրբ հայր Անտոն և զարդ անապատի։
Փափաքիմ ցանկամ ի տեսանել ըզքեզ. ո՛վ սուրբ. և այլն։
Ամպոյ նըմանեալ թեթեւագնաց եղեր. ո՛վ սուրբ. և այլն։
Թրուչնոց նըմանեալ և բանաւոր ծիծռանց. ո՛վ սուրբ. և այլն։
Քաւչից նըմանեալ սպիտակազգեաց ստեւով. ո՛վ սուրբ. և այլն։
Ի ծերպս վիմաց, դու հանապազ մաղթեա. ո՛վ սուրբ. և այլն։
Հայցեա զթթոյութիւն մեղուցելոցս անձանց
Այժմ և հանապազ միշտ և յաւիտեանս. ամէն։

1. Այլ օրինակ՝ Լերանց բարձանց անուշահոտ, և այլն։
2. » յանցաւորաց։
3. » լինին։
4. » պատեն։

digitised by A.R.A.R.@